

Համարը N 24
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2001.01.31/3(135)
Հոդ.81

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.02.2001

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 16.01.2001
Ստորագրման ամսաթիվը 16.01.2001
Վավերացման ամսաթիվը 16.01.2001
Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՄՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում են»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
16 հունվարի 2001 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2001 թվականի N 24
քաղ. Երևան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՄՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36 հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**

1. Հաստատել բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը՝
ա) ապահովել բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի համապատասխանեցումը բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական չափորոշիչներին.

բ) («Ք» ենթակետն ուժը կորցրել է 10.08.01 N 732)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2001 թվականի
հունվարի 16-ի N 24 որոշման

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՄՓՈՐՈՇԻՉԸ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բարձրագույն մասնագիտական կրթության (այսուհետև՝ բարձրագույն կրթություն) պետական ընդհանուր չափորոշիչը (այսուհետև՝ չափորոշիչ) սահմանում է՝
 - ա) բարձրագույն կրթության ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը.
 - բ) բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետև՝ ուսումնական հաստատություն) սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը.
 - գ) բարձրագույն կրթությամբ շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:
2. Չափորոշիչի պահանջների պահպանումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ուսումնական հաստատությունների համար:

II. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3. Բարձրագույն կրթության շրջանակներում իրականացվում են հիմնական կրթական ծրագրեր, որոնք ապահովում են «բակալավր», «դիպլոմավորված մասնագետ» և «մագիստրոս» որակավորմամբ մասնագետների պատրաստումը:

«Բակալավր» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական ու բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ ու պրակտիկա:

Ուսուցման ժամկետն առնվազն 4 տարի է:

Ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ «բակալավր» (բակալավր-մանկավարժ, բակալավր-տնտեսագետ, բակալավր-իրավաբան և այլն) որակավորման շնորհմամբ և դիպլոմի հանձնումով:

«Դիպլոմավորված մասնագետ» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական ու բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև շրջանավարտներին տարբեր տեսակի մասնագիտական գործունեության նախապատրաստող մասնագիտական և մասնագիտացման տեսական դասընթացներ ու պրակտիկա:

Ուսուցման ժամկետն առնվազն 5 տարի է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 5-6 տարի:

Ծրագիրն ավարտվում է ատեստավորմամբ, ներառյալ դիպլոմային աշխատանքը, «դիպլոմավորված մասնագետ» (ուսուցիչ, տնտեսագետ, ճարտարագետ, գյուղատնտես և այլն) որակավորման շնորհմամբ և դիպլոմի հանձնումով:

«Մագիստրոս» որակավորմամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է «բակալավր» որակավորմամբ մասնագետի առնվազն 2 տարվա խորացված ուսուցում՝ ներառյալ շրջանավարտների գիտահետազոտական կամ գիտամանկավարժական գործունեության պրակտիկան:

Ծրագիրն ավարտվում է ատեստավորմամբ, ներառյալ ավարտական աշխատանքը, «մագիստրոս» (մագիստրոս-մանկավարժ, մագիստրոս-տնտեսագետ, մագիստրոս-իրավաբան և այլն) որակավորման շնորհմամբ և դիպլոմի հանձնումով:

4. Հիմնական կրթական ծրագիրը սահմանում է ուսումնասիրվող առարկաների (դրանց բաժինների, հատուկ թեմաների, դասընթացների) անվանացանկը և սովորողների ուսուցման տեսակները (դասախոսություն, սեմինար պարապմունք, գործնական աշխատանք, ինքնուրույն աշխատանք, ուսումնական և արտադրական պրակտիկաներ և այլն):

5. Հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնով ապահովվում է մասնագիտական առարկայական չափորոշիչներով նախատեսված՝

- ա) համաշխարհային մակարդակին համարժեք ընդհանուր և մասնագիտական գիտելիքներով օժտված անձի ձևավորումը,
- բ) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը,
- գ) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող հայ անհատի ու քաղաքացու ձևավորումը,

- դ) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:
- 6. Հիմնական կրթական ծրագիրն ընդգրկում է հետևյալ պարտադիր դասընթացները՝
 - ա) ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական,
 - բ) մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական (այդ թվում՝ էկոլոգիական),
 - գ) ընդհանուր մասնագիտական,
 - դ) հատուկ մասնագիտական:

7. Հիմնական կրթական ծրագիրը պարտադիր դասընթացներից բացի կարող է ներառել նաև սովորողի ընտրությամբ (նախասիրական) դասընթացներ և ֆակուլտատիվ դասընթացներ:

8. Ուսումնական հաստատությունն իրավունք ունի հիմնական կրթական ծրագրում ընդգրկված 4 պարտադիր դասընթացներում կատարելու մինչև 15 տոկոսի չափով դասընթացային և մինչև 15 տոկոսի չափով բովանդակային փոփոխություններ:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԸ

9. Ուսումնական տարին, որպես կանոն, սկսվում է սեպտեմբերի 1-ին: Ուսումնական տարվա տևողությունը 34 շաբաթ է: Ուսումնական հաստատության, բացառությամբ արվեստի բուհերի, սովորողի ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքների բոլոր տեսակները (լսարանային՝ մինչև 36 ժամ):

10. Առկա (ստացիոնար) կրթության ձևի դեպքում պարտադիր լսարանային պարապմունքների առավելագույն ծավալը սահմանափակվում է պետական չափորոշչով, սահմանված բարձրագույն կրթության բովանդակության նվազագույնով:

Հեռակա կրթության ձևի դեպքում դասախոսի հետ սովորողի պարապմունքները չպետք է պակաս լինեն տարեկան 160 ժամից:

11. Ուսումնական տարվա ընթացքում սովորողների արձակուրդները պետք է կազմեն 7-10 շաբաթ, այդ թվում՝ ձմռանը՝ 2 շաբաթից ոչ պակաս:

IV. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Բարձրագույն կրթությամբ շրջանավարտներին ներկայացվում են հետևյալ որակական պահանջները՝

ա) բակալավրի ծրագրով կրթված շրջանավարտը պետք է ունենա հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական ու բնագիտական առարկաների, ազգային և համաշխարհային պատմության ու մշակույթի անհրաժեշտ իմացություն, ընդհանուր և հատուկ մասնագիտական տեսական ու գործնական հիմնարար գիտելիքներ, ստացած գիտելիքները փոփոխվող իրադրություններում կիրառելու ունակություն, մշակութային, իրավական, բարոյագիտական, գեղագիտական և էկոլոգիական գիտելիքների որոշակի պաշար:

բ) դիպլոմավորված մասնագետի ծրագրով կրթված շրջանավարտը պետք է ունենա հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ու բնագիտական առարկաների, ազգային ու համաշխարհային պատմության և մշակույթի անհրաժեշտ իմացություն (բակալավրի ծրագրից ոչ պակաս ծավալով), մասնագիտական խորը գիտելիքներ, արտադրությունը կազմակերպելու, մասնագիտության մեջ ինքնուրույնաբար կատարելագործվելու համար անհրաժեշտ կարողություններ և հմտություն, իրավական, բարոյագիտական, գեղագիտական և էկոլոգիական գիտելիքների որոշակի պաշար:

գ) մագիստրոսի ծրագրով կրթված շրջանավարտը պետք է ունենա մասնագիտական հիմնարար պատրաստություն, գիտահետազոտական և գիտամանկավարժական աշխատանքի, կառավարման, մասնագիտության մեջ ինքնուրույնաբար կատարելագործվելու համար անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ և հմտություն:

V. ՉԱՓՈՐՈՇՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

13. Չափորոշի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2001 թվականի
հունվարի 16-ի N 24 որոշման

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչը (այսուհետև՝ չափորոշիչ) սահմանում է՝

ա) միջին մասնագիտական կրթության ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը.

բ) միջին մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետև՝ ուսումնական հաստատություն) սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը.

գ) միջին մասնագիտական կրթության շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

2. Չափորոշիչի պահանջների պահպանումը պարտադիր է Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների համար:

II. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3. Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով:

4. Հիմնական միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է կրտսեր մասնագետի պատրաստումն ապահովող հիմնական մասնագիտական կրթական ծրագրով, որը պետք է ներառի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական, ընդհանուր մասնագիտական (մասնագիտությունների տվյալ խմբի համար), հատուկ մասնագիտական դասընթացները և արտադրական (մասնագիտական) պրակտիկան:

5. Միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագիրը պետք է ներառի պարտադիր դասընթացներ, այդ թվում՝ հաստատության ընտրությամբ, և նախասիրական առարկաներ՝ սովորողի ընտրությամբ:

6. Հաստատությունն իրավունք ունի հիմնական մասնագիտական կրթական ծրագրում ներառված պարտադիր դասընթացներից յուրաքանչյուրում կատարելու մինչև 15 տոկոսի չափով բովանդակային փոփոխություններ:

7. Միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրով ուսուցումը թույլատրվում է իրականացնել ուսուցման կրճատ ժամկետներում՝ հաշվի առնելով սովորողների նախկինում ստացած կրթությունը:

Հիմնական ընդհանուր կրթության հիմքով առկա ուսուցման տևողությունը պետք է լինի 3 տարվանից ոչ պակաս: Առանձին մասնագիտությունների գծով կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ կարող են սահմանվել այլ ժամկետներ:

Այս ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ՝ ներառյալ ավարտական որակավորման աշխատանքը, և շրջանավարտին մասնագետի համապատասխան որակավորման շնորհմամբ:

8. Միջին մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագիրը կրտսեր մասնագետի մասնագիտական որակավորման բարձրացման ծրագիրն է: Վերջինիս ուսուցման տևողությունը չպետք է մեկ տարվանից ավելի լինի: Ծրագիրը ներառում է արտադրական (մասնագիտական)

պրակտիկան, առանձին և (կամ) մի շարք ուսումնական առարկաների ուղղությամբ խորացված և (կամ) գործնական պատրաստումը:

Այս ծրագիրն ավարտվում է ամփոփիչ ատեստավորմամբ՝ ներառյալ ավարտական որակավորման աշխատանքը, և շրջանավարտին մասնագետի համապատասխան որակավորման շնորհմամբ:

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՑՆ ԾԱՎԱԼԸ

9. Սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքների բոլոր տեսակները:

10. Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում սովորողների պարապմունքների ծավալը դասախոսների հետ պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

11. Ուսումնական տարվա ընթացքում արձակուրդային ժամանակի ընդհանուր ծավալը պետք է կազմի 8-11 շաբաթ, այդ թվում՝ ձմռան ժամանակահատվածում 2 շաբաթից ոչ պակաս:

IV. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

12. Միջին մասնագիտական կրթությամբ շրջանավարտը պետք է ունենա կրտսեր մասնագետի որակավորմանը համապատասխան մասնագիտական, տեսական ու գործնական գիտելիքներ, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնագիտական առարկաների, ազգային ու համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն:

V. ՉԱՓՈՐՈՇՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

13. Չափորոշի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուկյան